

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՉԱՊԱԼՅԱՆ

Նորապսակ տ. Ներսես եպս. Պոզապալյանը, ավազանի անունով՝ Հակոբ, ծնվել է 1937 թվականի հուլիսի 5-ին Գրրոգ խանում (Կիլիկիա), արհեստավորի ընտանիքում:

1939 թվականին ընտանիքով գաղթել է և հաստատվել Բեյրութում, ուր ստացել է իր նախնական կրթությունը, տեղի հայկական Նուպարյան վարժարանում:

1951 թվականին ընդունվել է Անթիլիասի Դպրեվանքը, ուր սովորել է և մնացել մինչև 1955 թվականի հունիս ամիսը:

1955—1957 թվականներին սովորել է Էշրեֆիե թաղամասում գտնվող Կենտրոնական վարժարանում:

1957 թվականի սեպտեմբերին ծնողների հետ ներգաղթել է հայրենիք և բնակություն հաստատել Երևանում:

Տ. Ներսես սրբազանն ապրելով բարեպաշտ և հոգեսեր ընտանեկան հարկի տակ, մանկությունից իր մեջ զգացել է խորունկ սեր դեպի հոգևորական ասպարեզը և Աստուծո սեղանին ծառայելու կոչումը: Այդ նպատակով էլ, հայրենիք ներգաղթելուց հետո, 1957 թվականին ընդունվել է ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան, որի լսարանական բաժինը փայլուն հաջողությամբ ավարտելով, 1960 թվականին սարկավագ, իսկ 1961 թվականին Վեհափառ Հայրապետի ձեռքով կուսակրոն քահանա է ձեռնադրվել վերանվանվելով տ. Ներսես աբեղա: Որպես հմուտ եկեղեցական երաժշտության և արարողության, սույն թվականին էլ նշանակվել է Մայր տաճարի լուսարարապետի օգնական, միաժամանակ գավազանակիր Հայոց Հայրապետի և դասախոս հոգևոր ճեմարանում:

Տ. Ներսես սրբազանն իր կրոնական, եկեղեցագիտական կրթությունը խորացնելու համար 1963—1965 թվականներին սովորել է Լոնդոնի «Հարության կոլեջ»-ի աստվածաբանական ֆակուլտետում և, անգլիական եկեղեցու մասին գրած իր թեզով, ստացել «Լամբեթի աստվածաբանության» տիտղոս:

Այնուհետև վերադառնալով Մայր Աթոռ, 1965—1969 ուսումնական տարիներին պատասխանատվությամբ և արդյունավորությամբ վարել է հոգևոր ճեմարանի տեսչի պաշտոնը:

1969 թվականին կոչվել է Շվեյցարիայի հայոց հոգևոր հովվության պաշտոնին, ուր մնացել է մինչև 1971 թվականը:

Ծվեյցարիա գտնված ժամանակ, 1969—1970 թվականներին, կատարելագործել է իր ուսումը Ժենևի էկումենիկ ինստիտուտում:

1972 թվականից մինչև 1974 թվականի հունիս ամիսը եղել է հոգևոր հովիվ Լոնդոնի հայոց ս. Սարգիս եկեղեցու:

1974 թվականի նույն ամսին ընտրվել է Լոնդոնի հայոց հոգևոր տեսուչ և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակով նշանակվել հայրապետական պատվիրակ Մեծ Բրիտանիայի և հայ եկեղեցու ներկայացուցիչ Քենտրբերիի և համայն Անգլիայի արքեպիսկոպոսի մոտ:

Տ. Ներսես եպիսկոպոսը 1968 թվականից Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտեի անդամ է:

1970 թվականին ընտրվել է Աստվածաշնչային համաշխարհային ընկերության Եվրոպայի բաժնի գործադիր կոմիտեի անդամ:

Տ. Ներսես եպս. Պոզապալյանը գտնվում է իր հոգևոր ու մտավոր ուժերի ծաղկման հասուն շրջանում, իր կոչման բարձրության վրա:

1974 թվականի սեպտեմբերի 29-ին տ. Ներսես ծ. վարդապետն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ձեռքով Մայր տաճարում եպիսկոպոս է ձեռնադրվել՝ որպես հոգևոր տեսուչ և հայրապետական պատվիրակ Անգլիայի հայոց:

*
* *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է նորապսակ տ. Հմայակ, տ. Արիս և տ. Ներսես սրբազաններին՝ մաղթելով նրանց հետագա հաջողություններ, իրենց հոգևոր-ազգային գործունեության ճանապարհի վրա: